ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2026 թ.

«Հրապարակ» օրաթերթի լրագրող
Նելլի Կարապետյանին
/էլ. փոստ՝ nelli-ik@mail.ru/

Ի պատասխան Ձեր 13.03.2026թ. հարցման

Հարգելի տիկին Կարապետյան

Հաշվի առնելով, որ Ձեր կողմից նշված մանկապարտեզի և մարզում կառուցված մի շարք այլ մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման կամ վերանորոգման աշխատանքների պատվիրատուները հանդիսանում են համայնքները՝ ավարտական ակտի և շահագործման թույլտվության վերաբերյալ տեղեկությունը կարող է տրամադրել համապատասխան համայնքը:

2026 թվականի պետական բյուջեով առաջին եռամսյակում ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացվել է 7711.1 հազ. դրամ, որը հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար որպես պարգևատրում տրվել է մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին:

«Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով 2026 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին հատկացվել է 14802.4 հազ. դրամ, որը, ըստ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, տրվել է մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին՝ համաձայն իրենց 2025 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականների գնահատման արդյունքների:

X _____

Հարգանքով՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. Իրավաբանական բաժին
Հեռ. /0322/ 4-31-99